

նախորդի՝ իրր նախաւ (Թէւ նշանակութեան կողմից շատ կասկածական)։

Այս ձայնարանութեան մէջ չեն առնուած դիւն՝ մեծ (տի)։ դըն՝ տիւ։ ցուդի՝ սուտ։ դարայի՝ տապալել։ շարափանդի՝ շառաւիղ։ երի՝ որեար։ խփալ՝ վաղը։ օսիլի՝ տապ։ եփալի՝ վատ։ քեդի՝ տատարակ։ յալիլի՝ պատ։ ապարի՝ քաւթար։ նախալի՝ նախորտ և սրանց նման մի քանի ուրիշ բառեր։ որոնք ձեռով այնքան օտարոտի են թուում։ Լաւագոյն է սրանց վերայ խօսել առանձին ուսումնասիրութեան մէջ։ Սրա հակառակ ամէն մի փոխառեալ բառ որ ստոյգ կամ գրեթէ ստոյգ է, թէ ներկայացնում է ձայնական մի մասնաւորութիւն այստեղ ներկայացուած է։ Ըստ այսմ վերև յիշուած օրէնքների մէջ բոլոր երկրորդական փոփոխութիւնների օրինակները ամբողջական են։

Հրաչեայ Յ. Աճառեան.

1898 մայիս 19

Ստապրուրդ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Վարակումից նախագործութիւն. Ֆրանսիայի ձիաբարձի կառքերում շոգեխաններում և ուրիշ հասարակաց տեղերում յայտարարութիւններով արգելվում է գետնին թքել, Բժիշկներից մէկը ապացուցանում է, որ թքելով անմիջապէս տարածվում է զարհուրելի ախտերից մէկը՝ թոքախտը, որ Ֆրանսիայում տարեկան 150,000 զոհ է տանում։ Նա համոզուած է, որ պարզ առողջապահական հնարներով կարելի է բուժել այդ հիւանդութիւնը, իսկ ամէնից առաջ հարկաւոր է միշտ մաքուր պահել յատակները ուսումնարաններում, եկեղեցիներում, ժողովարաններում, զինուորանոցներում և հիւանդանոցներում։ Հրամաններն ու արգելքները նա անօգուտ է համարում, մինչև որ ինքը հասարակութիւնը չզգայ կարգադրութիւնների կատարման անհրաժեշտութիւնը։ Բաւական է, աւելացնում է նա, որ բժիշկները, ուսուցիչները, քահանաները, սպաններն ու ընտանիքի հայրերը հասկանան վտանգը և գործ դնեն այն միջոցները, որոնցով որ կարելի է ախտի տարածման առաջն առնել։

Հնդկաստանի կրօնական համաժողով. Բենարէսում 1900 թուին պէտք է հաւաքուի կրօնական երկրորդ համաժողովը։ Բուդդայականութեան և բրահմանականութեան այդ սուրբ քաղաքի մեծ հրապարակի վերայ կառուցանում են յատուկ շէնք համաժողովի նիստերի համար։ Հրաւերներ են ուղարկում թէ Բուդդայի, Բրահմայի, Տայովի, Զրուա-

նի, Կոնֆուցիոսի դաւանողներին, և թէ մոդիսական, քրիստոնէական, իսլամի և Ռամ-Մահու-Ռոյի կրօնի հաւատացողներին, Համաժողովը կը տևէ 30 օր։ Տեղեկութիւններ ստանալու համար պէտք է դիմել Զիկադօ Reverend Ienkin Lloyd Iones-ին կամ Վալկաթա Anagarika H. Dharmapala-ին, որ Mahā Bōdhi ընկերութեան զլխաւոր քարտուղար է։

Բարոյականութեան համաժողով. Յուլիսին Լոնդոնում գումարուել է մի միջազգային համաժողով, որ որ քաղաքագէտ արք և կանայք աշխատում էին լուսարանել հրապարակական բարոյականութեան անհաստատ խնդիրը, պարզել նորա զանազան հանգամանքները և ըստ չափու կարողութեան գտնել նոր հայեցակէտներ, որպէս զի արդի քաղաքակրթութեան ի ներքուստ սպառնող չարիքների դէմ ազդուապէս մաքառեն։ Համաժողովը գումարեց Federation abolitioniste (զեղծում բաժնացող զաշնակցութիւնը), որի հիմնադիր Տիկին Բատլէրը առաջնորդեց նաև ժողովի վիճարանութիւնները։ Զեղծում բաժնացող շարժումը առաւելապէս ուղղուած է պետութեան մէջ համընդհանր համարուած պոռնկութեան դէմ և երկու սեռի համար պահանջում է նոյն և հաւասար բարոյականութիւն։ Համաժողովում մեծ ամանութիւն կազմում էին աշխարհքի զանազան ծայրերից եկած կանայք, Փարիզի կանանցից մէկը իւր զեկուցումը կարդաց Ֆրանսիայի պոռնկութեան դէմ կանոնաւ պատերազմի մասին, որ ձօնել էր իւր մօրը, ձօնի մէջ յայտնելով, թէ «այս բաների մասին խօսելը քնաւ ամօթ է, այլ ամօթալի է, որ ասոնք գոյութիւն ունին» հասարակաց զայրոյթը չյարուցանելով։

Բաբելոնի նոր գիտերը. Բաղմահատոր „The Babylonian Expedition of the University of Pennsylvania“ — այժմ իւրջս է հանում 100-ի չափ առեւտրական յիշատակարաններ և գրոց եղբայր ժամանակակցի՝ Պարսից Արտաշէս Ա. արքայի իշխանութեան օրերից։ Յիշատակարանների հրէից և պարսից յատուկ անունները խիստ մեծ նշանակութիւն ունին երաշխական և իրանական անուանածանութեան համար։ Այնտեղ պատահում են այսպիսի անուններ, Միտրա—գատի (Միհրդատ), Տիրի—գատէ (Տրդատ), Սատա—բարզանա, Ասպաղասատ, Արտա—բարրի և այլն, մանաւանդ այնպիսիների, որ իսկոյն հրէական անուն են ճանաչվում, զոր օր, Պիլի—եաւա, Աբի—եաւա, Գադալ—եաւա, Պադա—եաւա (համա), Աբի—եահու կամ Աբիա, Գեդալ—եահու կամ Գեդալիա, որ ըստ հայկական տառադարձութեան՝ Գողդիա, Եահու—նաթան (համա), Եղ—նաթան, Յով—նաթան) բայց և եղոմական անուններ (Սոդ

— դան, Առդ— եաճար), ասորական անուններ (Ադ- դու— նաթան, Ադդու— բամ, որի մէջ լսվում է Ադդու— Ադադ, այսինքն ասորոց կուռքի յայտնի անունը, և վերջապէս արարական անուններ, Այս հանգամանքները ոչ միայն այն նշանակութիւնն ունին, թէ Եզրասի ժամանակ անուններն ինչպէս էին հնչում, այլ և այն, թէ այս տեղ պատահում ենք անձինքներին, որոնց հայրերը կամ որդիք բուն բարեկական անուններով են կոչվում, մինչդեռ իրանք կրում են հրէական կամ պարսկական անուններ, որով յայտնի երևում է, թէ Պարսից նահանգ Բարեխոնում օտար տարերքով ձուլումը բաւական առաջ էր գնացել, Թէ հրէայք և թէ պարսիկք այն տեղ այնչափ բնիկ էին դարձել, որ նոքա իրանց ընտանիքներով արդէն կիսով չափ բարեխոնացած են հանդիսանում, որի լաւ ապացոյց է իրանց խառն անուանակոչութիւնը, — Մինչև այսօր միմիայն Եզեկիէլ մարգարէից ծանուցած Քովար գետը՝ վերոյիշեալ նորագիւտ աղիւսներում րեւ- ոագրով կարդացվում է «Քարարու ջրանցք», նոյնպէս ևս Դանիէլի գրքից լաւ յայտնի Դեթարար (կարգու Դաթ— բար) պարսկական պաշտօնէութեան անունը՝ երևան է գալիս այս տեղ «դատա- բարի» ձևով (Հմմտ. ուստար- բարի, կարճ՝ ու- բարի տիտղոսը), — Ի վերջոյ առաջ ենք բերում այն առեւտրական յիշատակարաններից ամէնից կարճը. Բէլ— աքիդգին և Բէլ— սունու, Բէլ...-ի որդիքը, և Քատին, Բաղուզի որդին, ասացին Բէլ— նազին — սում - ին, Մուրազու - ի որդուն, այսպէս, զըմբուխտով ընդելուզած մատանու համար մենք երաշխաւոր ենք, թէ զմրուխտը 20 տարուայ ընթացքում մատանուց դուրս չի ընկնի, Իսկ եթէ ժամանակից առաջ դուրս ընկնի, այսու պարտաւորվում են վերը յիշատակած երեք (վաճառողները) Բէլ— նազին— սում - ին (գնողին) վճարել երեք մնաս արծաթ»:

Բարեգործական ընկերութիւններին մի օրինակ. Ըմե- րիկացի օրիորդ Շէնկը, մաադրուելով վիրաւորեալ- ների օգտի համար ժողովարարութիւն անել, հնա- րեց հետեւեալ պարզ միջոցը. նա դիմեց իւր շորս բարեկամութիւններին խնդրելով, որ իրան ուղարկեն 10 ցենտ և նամակներ գրեն— իւրաքանչիւրը 4 ծա- նօթներին նոյնպիսի խնդրքով և առաջարկու- թեամբ, որ իրանց կողմից ևս խնդիրքը շարունա- կեն միևնոյն եղանակով, Օրիորդը կենում է Բա- բելոն փոքրիկ քաղաքում: Մի շարաթ անցնելուց յետոյ՝ փոստատունը հեղեղուեցաւ օրիորդի ան- ուան նամակներով: Փոստի կառավարիչը հարկա- գրուեցաւ յատուկ օգնական վարձել, Օրիորդի նամակները շատ շուտ հասան օրական 3500-ի, — և այն մի այնպիսի քաղաքում, ուր որ օրէնք առ- հասարակ հազիւ 300 նամակ էր գալիս բնակիչներին

անունով, Բացի սորանից ինքը կառավարիչը և ոստիկանապետը հարկւններով նամակներ էին ստա- նում, թէ արդեօք օրիորդը վիրաւորեալների համար է ժողովարարութիւն անում թէ խաբերայութիւն է, և նոքա պարտաւորվում էին ամէնին պատաս- խանել: Կառավարիչը շունչ քաշելու ժամանակ չունէր, այնքան ընդարձակուեցաւ գործը: Օրիորդի նամակների թիւը սկսեց մինչև 15 հազարի հասնել, Ոմանք ուղարկում էին զոլլարներ և մե- ծագումար լիւրեր, Օրէնք երկու անգամ Շէնկի տնից ահագին քթոցներ էին ուղարկվում փոստը՝ նամակներ բերել տալու համար, — Օրիորդն ուղում էր, որ իւր շղթան մինչև հարիւր հասնի, այնպէս որ ծանօթներից իւրաքանչիւրը 4 նամակ ստորա- գրելուց յետոյ վերան նշանակէր յաջորդ թուա- համարը, քան ինչ թուահամարով որ ինքը նամակ էր ստացել: Սակայն անխոյանի է, որ օրիորդի լուգարիքի տեղեկութիւնները տկար էին, վասն զի չէր գուշակել, թէ աշխարհում այնքան մարդկանց բազմութիւն չի գտնուի, որ հաւասարուի (4100-ին (4-ի հարիւրերորդ աստիճանին), և նա չմտածեց փոստատան կառավարչի անհնարին տիտանական աշ- խատութիւնը, Սա վերջապէս այնպիսի աղմուկ բար- ձրացրեց, որ օրիորդը հարկադրուեցաւ լրագրի միջոցաւ յայտարարել իւր «անծայր շղթայի» դա- րարումը, Պարապ լրագրողներից մէկը հաշուել է, որ քսաներորդ խմբի նամակների թիւը կը լինի 1,099,511,627,776, իսկ թէ հարիւրերորդ խմբի թիւը ո՞րքան կը լինի, այդ թող հաշուի պարապ ընթերցողը, — Բայց խօսք չկայ, որ ժողովարարու- թեան այս եղանակը իւր բոլոր անյարմարութիւննե- րով հանդերձ շատ սրամիտ է, և այդպէս առանց մեծ աշխատութեան բարեգործական ընկերութիւն- ները կարող են մեծամեծ գումարներ հաւաքել,

Ս. Մ.

† ԻՆՍԱՆ ԲԻՍՄԱՐԿ.

Յուլիսի 18/30-ին իւր Գրիգորիսարուհէ կա- լուածքում, 83 տարեկան հասակի մէջ, վախճան- ուեցաւ գերմանական կայսերութեան առաջին կանցլի- ր և մեր դարի ամենամեծ պետական անձն՝ իշխան Օտտօ Բիսմարկ, նորա մահն այնպիսի ընդհանուր համակրութեան ցոյցեր յառաջ չբերաւ, ինչպէս քիչ ժամանակ առաջ տեղի ունեցած միւս նշանա-ւոր և մեծ մարդու, Վլադստոնի, մահը, երկար կանցլիքը իւր աշխարհաստան քաղաքականութեամբ այնչափ թշնամիներ է վաստակել, որ այդպիսի ընդհանուր համակրութիւն վայելել չէր կարող, նորան բոտ արժանւոյն գնահատելու համար պէտք է ընդունակ լինել բոլոր կողմնակի հաշիւները մէկ կողմ դնելու, գերմանացու հոգւոյ մէջ թափան- ցելու և գերմանական հայեցակէտով կշռադատելու, նա Վլադստոնի պէս հանրամարդկային բնաւորու- թիւն չէր, այլ զուտ գերմանացի, որ կեանքը դը-